ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2023 թվականի թիվ 110-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 25-րդ հոդվածի 1-ին մասերով ու «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» թիվ 521-Ն որոշման պահանջները՝

ո ր ո շ ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչ կազմակերպելու նպատակով հանձնարարել.

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի տարածքային N1 և N2 ստորաբաժանումների ղեկավարներին.

1) 2023 թվականի ամառային զորակոչն անցկացնել սահմանված կարգով 2023 թվականի ապրիլի 17-ից մինչև հուլիսի 31-ը ներառյալ հաստատված գրաֆիկով՝ ապահովելով նախատեսված թվաքանակը,

2) ժամկետային զինվորական ծառայության զորակոչից խուսափող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ նյութերը սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Տավուշի մարզային վարչության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Տավուշի մարզային վարչությանը.

1) ապահովել զորակոչիկների անվտանգ տեղափոխումը և հասարակական կարգի պահպանումը զորակոչային տեղամասում,

2) ապահովել մարզի տարածքում և մարզի տարածքից դուրս գտնվող զորակոչիկների որոնումները և նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամաս,

3) զորակոչի ընթացքում զորակոչիկներին փոխադրող ավտոմեքենաներին ուղեկցելու համար զորակոչային տեղամասին կցել ճանապարհային ոստիկանության անձնակազմեր:

3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը.

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի տարածքային N1 և N2 ստորաբաժանումների հայտով զինակոչիկների ֆլյուորո /ռենտգեն/ զննում, սոնոգրաֆիկ հետազոտում և կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել մարզի առողջապահական համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութերով, ֆլյուորո /ռենտգեն/ ժապավեններով և երևակման նյութերով, ինչպես նաև իրականացնել կորոնավիրուսի (COVID-19) տարածման և զինված ուժեր ներթափանցման դեպքերի կանխարգելման անհրաժեշտ միջոցառումներ:

4. Մարզի համայնքների և կազմակերպությունների /անկախ կազմակերպական և իրավական ձևերից/ ղեկավարներին.

1) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակներն ստանալուց հետո նրանց նկատմամբ կիրառել աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներ և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին,

2) իրավասության սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության զորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի տարածքային N1 և N2 ստորաբաժանումներ:

5. Մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ զորակոչի ընթացքում ընդլայնել ռազմահայրենասիրական աշխատանքների լուսաբանումը զանգվածային լրատվական միջոցների միջոցով:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ինձ:

Մարզպետ Հայկ Ղալումյան

22.05.2023

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ